ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

1

Անուն կա, որ վարդի բույր է,
Կա, որ սարի պարզ աղբյուր է.
Կա, որ քեզ տուն կանչող քույր է,
Կա, որ անուշ մոր համբույր է.
Կա, որ ձեռիդ եղբոր թուր է,
Լավ անունը՝ պատիվը մեր,
Միշտ լավ գործի ծնունդն անմեռ:

2

Անուն էլ կա, որ մեր գլխին
Մաղրածուի գդակ է հին,
Որ կնքել էր ինչ-որ տերտեր,
Կամ թե դժնի մի նորտատեր.
Ու մենք հաճախ չենք ամաչում,
Հին անվամբ ենք իրար կանչում,
Թե՝ հեյ, ո՞ւր ես բեղնի խաշո,
Ի՞նչ բանի ես ղաշաղ Վաշո,
Անուննե՞ր են, թե հին վերքեր,
Որ բանալով՝ չենք հարցնում դեռ,
Թե ի՞նչ շլուտ, ի՞նչ շպլախենց.
Երբ շպլախենցն աշխարհ փոխեց...

. . . .

3

Անուն էլ կա, որ լսելիս
Մարդ ակամա հարց է տալիս,
Թե ի՞նչ կնյազ, ի՞նչ իշխանիկ,
Ի՞նչ խան, ախպեր, կամ ի՞նչ խանիկ,
Երբ ինքն ահա մարդ է մի նոր,
Մի հին չոբան, չոբանի թոռ,
Առաջ քաշված,
Փառքով նշված.
Ինքն է թողել իշխան ու խան,
Բայց գրվում է դեռ Իշխանյան,
Աղախանով ու Բախշիբեկ,
Ամիրխանով ու Յախշիբեկ,—
Այն էլ Յախշի՝ վայ անհոգի,
Կարծես թե կար լավն էլ բեկի,
Անունն անգամ
Օձի նման
Փաթաթված վիզն Հայաստանի՝
Այրող հուշն է այն սուլթանի,
Որ մեր լեզուն ու հողն անվերջ
Ձուլել կուզեր իր ցեղի մեջ.
Եվ կձուլեր (հայ կա դրսում,
Որ հայերեն էլ չի խոսում...),
Մենք էլ այժմ չէինք կարող
Խոսել լեզվով մեր դայլայլող,
Հայոց լեզվով մեր բովանդակ,
Թե մեզ չառներ իր թևի տակ
Մեր ապավեն, մեր աչքի լույս,
Մեր մեջքի սար հսկան ռուս,
Խաղաղության
Անհաղթ հսկան,
Որ կանչում է, թե ո՞վ տղաս,
Բյուր լեզու էլ թե իմանաս՝
Չմոռանաս քո մայր լեզուն,—
Մոռանալդ է ոսոխն ուզում:

4

Անուն էլ կա (թող ինձ ների
Հավատացյալն աստվածների)
Այն, որ որդիդ՝ ոչ երկնախոս,
Բայց անունն է դեռ խնկանոս,
Դեռ Տիրատուր, դեռ Մղդսի,
Եվ դեռ նույնիսկ խառամուխսի,
Հաջի Վանես կամ Ուխտանես,
Կամ Քրիստիկ, կամ թե Տիրենց,
Եվ դեռ այս հին ճգնավորենց
Անուններն են խոսում անգեղ
Ժամի լռած զանգերի տեղ.
Կամ թե մեր նոր որդոց գլխին
Վարդապետի վեղար են հին,
Այս է ծիծաղն, ով իմ Ծատուր
Այժմ էլ ի՞նչ Աստվածատուր,
Այս ինքնաստեղծ բնության մեջ
Ո՞վ էր տեսել աստծուն քո խեղճ՝
Չեղածն ինչպե՞ս
Մի բան տար քեզ,—
Այն էլ որդի՝ մորից ծնված,—
Երբ մայրը կա՝ էլ ի՞նչ աստված:

5.

Անուն էլ կա, բայց ո՞րն ասես,
Կատակով են դրել կարծես,
Մեկը մեկից անմիտ ու սին,
Էլ անհեթեթ Լյուքս ու Տորգսին,
Էլ Իլիոնա, էլ Ալֆրեդ,
Էլ Ժորժետա, էլ Վան-Շիլբերտ,
Էլ Ռիտտա, էլ Անթիֆոն,
Էլ Ջուլետտա, էլ Պատիֆոն,
Էլ Կլարիս, էլ Անելկա,
Թե թարգմանես՝ ի՞նչ դուրս կգա,
Ծաղր ու ծանակ մեր ուստրերին,
Եվ առավել մեր դուստրերին:
Բայց ծիծաղից վատթարը կա՝
Հանդիպում ես յոթն աղջկա՝
Յոթից մեկն է Վարդ կամ Նարգիզ.
Մյուսները՝ Ալիս-Լուիզ,
Եվ դեռ նույնիսկ Վելլա
Կամ Նավէլլա,
Մարդ չգիտե խնդա թե լա:—
Մի՞թե չկար, որ չես դրել
Պարզ մի անուն մարդավայել,
Որ կնքել ես Արգենտինա՝
Կարծես երկրի քարտեզ է նա.
Ծիծաղում ես, բայց սպասիր՝
Մարդ-ավտոյի մասին լսիր.
Այն, որ ավտո շատ սիրելով,
Շեվրոլետ էր դրել սիրով,—
Բայց Շեվրոլետն օրորոցում
Այս վշտից էր լալիս, կոծում:
Եվ ասում են՝ երբ մեծացավ,
Անունն ինչ է՝ երբ հասկացավ,
Հենց այս եղավ խոսքն առաջին,
Որ կայծակեց հոր ականջին.—
— Ի՞նչ Շեվրոլետ, ավտո հո չե՞մ,
Լավ է՝ քեզ էլ փիլիս կանչեմ:
Ո՞վ է բռնել մեր կոկորդից,
Որ ձեռ քաշենք Հայկ ու Վարդից:—
Այն ուրիշ է, որ տուն բերեց
Հայրենադարձն այն հողմածեծ
Հեռաստանից պանդխտության,
Ուր կորչում է հետքն հայության:—
Իր Հայկ անունն այնտեղ հալվում,
Մայքլների հետ է ձուլվում,
Դառնում Ջոնքլ, Մայքլ ու Թոմ,
Եվ սփյուռքում անտուն, անտոհմ
Հազարից մեկն հազիվ ունի
Անուշ անունն իր հայրենի,—
Մի Հասմիկ է, հազար Էլլա,
Մի Անահիտ, այնքան Բելլա,
Մի Արտավազդ, այնքան Համլետ,
Որ վիճում են մեր անվանց հետ,
Թե՝ «էրբ բանն այսպես գնա՝
Էլ ձեր հայոցն ո՞ւր կմնա...»:
Այնինչ՝ ամեն հայ դյուցազուն
Փրկեց քո կյանքն ու քո լեզուն
Անհայտ հեռվում
Ընկավ կռվում,
Որ դու հիշես, պահես, փրկես
Մոռացումից անունն իր վես,
Վարդան պահես, պահես Հունան,
Վահրամ պահես, որ իմանան
Թե ո՛ր երկրի ծաղիկն ես դու.
Տոհմանունն էլ հողն է մարդու:—
Երբ հնչում է մի Սանասար՝
Կարծես Սասնա քո սարն հասար:
Մի Արաքս է երբ մեկն ասում՝
Մայր Արաքսն է հետդ խոսում.
Թե Հայկարամ կուզեմ դնես,
Դավիթ դնես, որ նմանվես
Անհաղթ Դավթին քո Սասունի:
Ու թող ծաղկի կյանք ու գինով
Ամեն մի ազգ իր անունով,
Թող չխանդի Դեզդեմոնան՝
Երբ դուստրերս Նազիկ մնան,
Ինքն էլ մնա
Դեզդեմոնա,
Խաղաղ մնա, մնա մեզ քույր,
Որ անվամբ էլ ծաղկենք մաքուր:
Մեր անունն էլ իր միտքն ունի,
Ի՞նչ պակաս է մի Աղավնի,
Անունն ինքն էլ աշխարհի մեջ
Անուշ մի կանչ խաղաղատենչ:
Մի Հասմիկ է երբ մեկն ասում՝
Կարծես ծաղիկն ինքն է խոսում:
Թե ինչ ասեմ ես այն հային,
Որ սեր չունի էլ ազգային,
Որ մայր-հողից չի ամաչում՝
Իր հայ որդուն Ջոն է կանչում,
Կամ այլ մի բան, և անվրդով
Ամեն որդու մի ծնունդով
Թաղում անուն մի հայկական...
Այս է ցավը, ով մտակույր,
Պահիր անունդ հայրենաբույր:
Պահիր Աստղիկն ամենազեղ՝
Անունն անգամ բախտի կանթեղ.
Պահիր քո այս Ցողիկն անուշ,
Այս Նայիրյան Շողիկն անուշ,
Այս Ծովինարն իմ ծովաքույր,
Այս Նունուֆարն անուշաբույր,
Այս Երազիկն իմ նազելի,
Այս իմ Նազիկն երազելի,
Այս Նարինեն իմ նազիրան,
Այս Կարինեն մեղրաբերան,
Այս Մանուշակն անուշահոտ,
Այս Սիրարփին սիրակարոտ,
Այս Գայանեն իմ գեղանի,
Այս Անահիտն հուր ու գինի,
Այս իմ Նեկտարն հայրենաբույր,
Անունն անգամ մեզ հող ու ջուր.
Այս իմ Արմեն, Արմենուհին,—
Անունն ինչո՞ւ զոհես մահին,
Այս Մարգարիտն իմ ծովագանձ—
Գանձերդ ինչո՞ւ թողնես կորած:
Կամ երբ մի նոր մանչ ես ծնում,
Անունն ինչո՞ւ Հայկ չես դնում.
Անունն անգամ զրահ հագին.
Կամ ի՞նչ վատ է մի Գարեգին,
Կամ այս Շավարշն հայրենաշեն,
Այս իմ Տիգրանն ու Եղիշեն,
Այս իմ Արան գեղեցկաթով,
Այս իմ Մհերն իր քաջ Դավթով.
Այս իմ Վահանն ու Վրթանես.
Քո վահաններն ինչո՞ւ վանես,
Անունն էլ քեզ բերդ ու վահան՝
Ընդդեմ չարի ու չար անվան:
Ես մեկն ասի, դուք հիշեցեք
Մեր անուններն հազար ու մեկ,
Հազար բարի գործից ծնված՝
Սերունդներով ոսկեջրված:
Մարդս զանգ է, աշխարհն ականջ՝
Լավ անունը զանգի ղողանջ.
Բայց զանգն առանց զանգահարի,
Թեկուզ ապրի հազար տարի,
Ոչ մի ղողանջ չի հանելու՝
Զանգահարը գործն է մարդու,—
Գործ, որ Դավթից մինչև Հունան
Մեր տավիղն է խաղաղության:

6

Էլ ո՞ւր մեր լույս լեզուն մարել՝
Արևմուտքի դեմ խոնարհել.
Ու թող այնտեղ Ջեմման՝ Ջեմմա,
Աստղիկն այստեղ Աստղիկ մնա:
Քանզի ամեն ազգի անուն
Իր տարազն է, իր իսկ լեզուն:
Ինչո՞ւ հագնես ձեն ամենի,
Երբ քոնն ունես, ո՛վ քաղքենի:
Երբ իր գույնից,
Իր անունից,
Իր մայր լեզվից ձեռ քաշողը՝
Վերջն էլ կտա իր մայր հողը:
Աշխարհը դաշտ, ազգերն իր մեջ
Ծաղիկներ են պես-պես ու պերճ:
Ամեն ծաղիկ իր բույրն ունի,
Իր գույնն ունի,
Անունն ունի,
Տարազն ունի իր հայրենի:
Ինչքան ծաղիկ բույր ու շաղոտ՝
Աշխարհն այնքան անուշահոտ.
Դու քո Շուշանն ինչո՞ւ թաղես՝
Օտար դաշտի Լիլիան քաղես.
Ո՞վ է բռնել մեր կոկորդից,
Որ ձեռ քաշենք Հայկ ու Վարդից,
Ծաղիկներից Ալագյազի,
Շուշաններից մեր Մասիսի,
Ու թող ծաղկի թե՛ Լիլիկը,
Թե՛ մեր Շուշան-Շուշանիկը,
Քանզի ամեն ազգի անուն
Իր տարազն է, իր իսկ լեզուն,
Իր սրբությունն հավերժական,
Եվ օրենքն է ողջ մարդկության՝
Իր ազգինը ով չսիրի՝
Թշնամին է ողջ ազգերի: